



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԲ. 1863 — ԻԱ. ՏԱՐԻ. — ՄԱՅԻՍ

ԱՇՈՏ Ա

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(20 Մարտի — Մայիս 27)

Ա. Հայադիր օրացույցակն այսօր  
քանի մը անձանց սրբազն յիշատա-  
կին մէջ վեհագոյն կու նշանակէ զ'Ա.  
ԱՇՈՑ ԲԱԴՐԱՑՈՒԽԻ. որոյ ծաղկած ժա-  
մանակը գտնելու համար՝ մեր հիմա-  
կուան թուականին առաջին թիւը վեր-  
ցունելու է (1-863)։ Հազարամեան  
դար մ' առաջ նշանաւոր կէտ մ'է Հայ-  
ոց պատմութեան, մեր հայրենեաց մէջ.  
մեծ յեղափոխութեան մը միջոց, որ եր-  
կայն և ծանր տարիներ քշեց, բայց յա-  
ջող վախճան և արգասիք ունեցաւ.  
յայտ է թէ ոչ բաղդով, հապա ջանքով,  
աշխատութեամբ, չափով ու թուով.  
այսինքն խելքով, իմաստութեամբ, ա-  
րիութեամբ, առաքինութեամբ։ 450  
տարիէ վերքաղաքական միութենէ ճեղ-  
քած քայլայած աղգ մը, և Հայու պէս  
աղգ, որ իրեք աշխարհակալ զօրաւոր  
տէրութեանց, Պարսից, Յունաց և Արա-

բաց, հազարումէկ փորձանկքներէն ան-  
ցեր էր տաշուելով ու մաշուելով, և դեռ  
կու տքար, մանաւանդ այդ ետքի ազ-  
գին ճիրանաց տակ, այդպիսի աղգ մը,  
կերպով մը դարձեալ մէկ քաղաքական  
ազգային գլխու մը մօտելու յօդելու, և  
այն գլխոյն վրայ այլ արքունի փառա-  
փայլ թագ մը դնելու, և յետ այնքան  
անյօյս դարուց՝ Հայոց արքայ ըլլալու,  
կամ ծածուկ աստուածային հրաշք մը  
պէտք էր, կամ յայտնի ԱՇՈՑ մը՝ այն  
ծածուկ հրաշքը իր բազկաց, մնաց և  
սրտին մէջ ամփոփած, զոր և ըստ ժա-  
մանակին յերեսան կու հանէր. որ և  
բազմաց անկարելին նաև անկարծելին՝  
ի գլուխ տարաւ, հաստատեց, 30 տա-  
րի աշխատելով. ոչ այնքան պրով և ա-  
ղեղամբ, (թէ և նոյն տարիներուն մէջ  
ինքն էր Հայ հայրենեաց առաջին զինա-  
կիրն և անձնապահն այլ), որպան խո-

հեմ մաքովն, և թերեւս անկէ այլ աւելի՝ զգայուն և առատ սրտովն, որոց դէմ չի կրցան կենալ ոչ արաբական բանութիւն, ոչ բիւզանդական նրբութիւն, և ոչ ազգային նախանձ և ինքնակամութիւնն . ամէնքն այլ հաճեցան հաւանեցան սիրեցին զԱշոտ . ամիրապետն Բաղտատայ՝ անոր յանձնեց բոլոր Ատրպատականի, Միջագետաց և կովկաս լերանց միջոց եղած երկրին վերակացութիւնը և խաղաղութեան պատասխանատու ըլլալը . կայսրն կ. Պոլսոյ՝ ՚ի մէջ ամենայն թագաւորաց և իշխանաց ժամանակին որոց հետ վերաբերութիւն ունէր, ըստ մեծութեան՝ յետ խալիքայից զԱշոտ կու ճանշնար մեծապատիւ ազգիշխանն, և ըստ սիրոյ՝ առաջին Որդիի կոչելով զնա իր թըզթոց մէջ . իսկ ազգային իշխանք նաև անկախք՝ զնա ճանաշէին նախիշխան և միայն թագաւոր :

**Ազգի** մը նոր գլխապետ ըլլալ կամ ազգ մը կանգնել յինքնիշխանութիւն, մեծ յաջողութիւն կամ մեծ ճարտարութիւն կու պահանջէ . և ՚ի հարկէ այսպիսի ձիրքեր ունէին որոնք որ այսպիսի գործ կատարեցին . մեր Աշոտն այլ անոնց նման . բայց իրեն նման դժուար պարագայից մէջ ըլլալով և այնքան խոհեմութեամբ, զգատութեամբ և ազնուաբարոյութեամբ վարուող՝ շատ քիչ գտնուին ազգայարոյց և ազգակեցոց ըստած անձանց մէջ այլ : Թողով օտար ազգաց պատմութիւնները, մեր պատմութեան մէջ այլ Աշոտէն առաջ և վերջը քանի մը անզամ գիտենք՝ Հայոց ինքնազիսութիւննին կորուսանել և նորէն ձեռք բերելը՝ ՚ի ձեռն քաջ և հայրենասէր և երթեմն և փառասէր անձանց . քիչ շատ ծանօթ են Հայկն, Արամ, Պարոյր, Տիգրան, Զահրատ, Վաղարշակ, Տրգատ, և յետ Աշոտոյ՝ Գագիկ, Ռուբէն, Լւսն . թողոնք աւելի անձանօթները, որ՝ ՚ի զանազան ժամանակ և աւելի տիրապլուխ թագաւորութիւն կանգնեցին : Ազգին պատմութիւնը գիտողն գիտէ նաև ասոնց ինչ կերպով այդ տիրապլութեան համնին .

ոմանց՝ բաղդով (ինչպէս վաղարշակ), ոմանց քիչ մը բռնութեամբ այլ, ինչպէս Ռուբէն, ոմանց լոկ փառասիրութեամբ՝ ինչպէս Գագիկ Արծրունի . ոմն խորագիտութեամբ, ինչպէս Լւսն, և գրեթէ ամէնքն քաջութեամբ և պատերազմօք . այլ միայն Աշոտոյ թագաւորութիւնն ասոնցմէ տարբեր և աւելի փառաւոր կ'երեխ . մէկ մը որ՝ ուրիշներուն թագաւորութիւնն կամ տիրապետութիւնն, եթէ բռնութեամբ և բաղդով այլ չէր, գոնէ կէս պատրաստուած էր առաջիններուն ջանքով, իսկ Աշոտոյ պատրաստողն՝ գրեթէ իր արդիւնքն էր . մէկ մ' այլ որ ուրիշներն թագաւորութեան փափագեցան, ջանացին, իրենց ազգին վրայ կանգնեցան . Աշոտ գրեթէ առանց փառքը դիտելու՝ հասաւ իշխանութեան . միայն ինքն ընտրուեցաւ և կանգնեցաւ ազգային հաճութեամբ . և ոչ ազգին ուամկին, կամ արդէն իրաւամբք հպատակացը հաճութեամբ, ինչպէս ուրիշներէն շատն, հապա իրեն նման ցեղապետաց և աշխարհատեարց հաւանութեամբ . որոյ համար ընտրուածին վրայ մեծ կատարելութիւն ճանչնալու է, ընտրողաց վրայ այլ մեծ առաքինութիւն . որ դժբաղդաբար սակաւագիւտ եղած է այնպիսի ազգի մը մէջ, որուն ընական երկրին ձեն ու գիրքն, ձորերն, լեռներն ու գետերն անգամ՝ զատութիւն և իրարմէ անկախութիւն կ'ազգէին ընակչացն : Հոս անկարելի է ենթագրել մեր հազարամետ իշխանաց և նախարարաց վրայ այնպիսի առաքինութիւն, առանց ենթագրելու Աշոտոյ մեծագոյն կատարելութիւնն . և յիրակիով որ մեր վերոյկարգեալ ազգայարոյց տիրապետաց վարքը ուշի ուշով քննէ, կարծեմ չի կրնար գտնել առաքինի մը իբրև զԱշոտ . միայն Վաղարշակ կրնայ այս պատուիս արժանի սեպուիլ, բայց իր օտար ծագումը, և բաղդով թագաւոր ըլլան, թողոնք դիցապաշտութիւնն այլ, մեզի այնչափ սիրելի չեն ընծայեր զինքը, որչափ երախտաւոր մեր հին հարանց պատմութիւ-

Նը գտնել և պահել տալուն համար, որով և անբաւ շնորհակալութեան պարտական է իրեն և պիտի ըլլայ ազգերնիս : Երջանիկ նա, մանաւանդ թէ մենք, որ գտուեցաւ այն ատեն իր և մեր բաղդին յարմար՝ իրաս կատինամը, որ մեր Հայկազանց պատմութեան պատճառաւ՝ զինքն այլ անմահացուց . ինչպէս որ իրմէ եպքը անոր գրուածքը առաջին կարդացող և նորոգողն Ագարանգեղոս այլ անմահացուց իր ժամանակի աղջակեցոյց Տրդաւոր . իսկ անոր վերջին կարդացող և Հայերէն հաւաքուն՝ Մովսէս Խորենացին՝ երբ վազարշակայ թագին և ցեղին ընկնալը և վերջանալը լալոտ աչքը տեսաւ, զնի կրնար անմահացընել ... — զբագրատունին Սահակ, զնախահայրն Աշոտոյ . « Անմահ 'ի յիշատակ թուղուլ քեզ զայդ (Պատմութիւն Հայոց) և որ զինի քո գալոց են ազգք » : Մար իրաս, Ագաթանգեղոս, Մովսէս, իրեք աննման անձանց համար գրելով, թերես անոնցմէ աւելի զիրենք, իրենցմէ այլ աւելի անմահացուցին զազդս Հայոց, զմեզ ...

Բայց ուր կ'երթանկք, Հայկակ, թողլով զԱշոտ . — զԱշոտ ով անմահացնէ . չունէր, չի գտաւ ինքն այլ իրաս մը, Մովսէս մը, որ իր թէ քաջութիւնները թէ լաւութիւնները մեզի ճառէին : — Ունէր, այո . և յայսմ ևս՝ ըստ մասին՝ բաղդաւոր քան զառաջինսն եղաւ . վասն զի գտաւ ոչ միայն աղջային՝ այլ և աղջական մը, թոռնակից մը, զբագրատունին Շապուհ, որ բոլոր իրենց ցեղին պատմութիւնը գրեց 'ի պատճառաւ իր համիլիրակին . դժբաղդ մենք եմք, որ գեռ այս բազրատունեաց պատմութիւնը չեմք տեսած, և ձդ դարէ վերջ կարդացող այլ չեմք գիտեր, թէ և անյոյս չեմք օր մը յերեւան ենելուն : Այդ փափագելի գրուածդ անշուշտ ոչ իրասայ և Մովսէսի գրուածոց չափ հետաքըննական պիտի ըլլայ, և ոչ Ագաթանգեղոսին պէս վայելչարան, որովհետև ժամանակակից անուանի պատմիչ մ'այլ, պերճաբանն Յովիաննէս կաթողիկոս, կ'ըսէ անոր համար .

« Ոչ կարացեալ ըստ քերթողական հրա « հանգացն համառօտաբար ընձեռել, « սակայն ըստ իւրում ժամանակի ըն « տանի գոլով նորա զրուցացն ամե « նայնի, գեղջուկ բանիւ բաւական քեզ « տայ պատճառս տեղեկութեան » . սակայն մեր հոս բնտուածը՝ չէ քերդութիւն, այլ պատմութիւն, տեղեկութիւն ընտրեալ անձին՝ որոյ վարքը « 'ի « մանկութենէ մինչև յերևոյթս երի « տասարդութեան ... զզօրութիւնս և « զքաջութիւնս և զպատերազմնւնս, և « զհրոսմունս 'ի յայլս, և զայլոց ևս « 'ինա, ... յայտապատում արարեալ « է, (և) զզրոյցս պայազատութեան « Աշոտոյ, ... զիշխանական պատմութեան և զթագաւորացն զհանգա « մանացն զկարգս » և այլն . մանրամասն գրեր էր Շապուհ, վասն այնորիկ կաթողիկոսն անոր կու խաւրէ փափագողը, և ինքն միայն թագաւորութենէ վերջի դիպուածները համառօտիւ կու յիշէ : Եւ որովհետև անկէ զատուրիչէ մ'այլ գրուած չունիմք, ըսել է որ այս արժանաւոր անձին կատարեալ պատմութիւնն անձանօթ է մեզի . բայց որչափ այլ որ ցաւալի է այս՝ այնչափ այլ ցնծալի՝ որ մնացած քիչ տեղեկութիւնն այլ աւելի զօրաւոր վկայ կ'ըլլայ անոր մեծութեանը : Եթէ Շապուհ գրածն՝ թէ իրեն և թէ Աշոտոյ պարծանք կրնար սեպուիլ աննախանձաբար աղջակցին պատմութիւնն ըլլալուն համար, թերես ուրիշ կողմէ՝ իրք աղջակից՝ կողմնասէր կամ շողոքորթ կարծուէր . բայց կաթողիկոսն որ իր ժամանակին գէպերը՝ թէ վայելչաբար և թէ անկողմնասիրութեամբ գրած է, որչափ այլ զգուշացեր է Շապուհոյ պատճառ չի կրնելու համար՝ Աշոտոյ վրայ խօսելէն, չէ այլ կրցած համարմունքը, զարմանքը, ըսենք թէ և սէրն այլ զսպելու չըսել . և ինձ ասսանօր ոչ արդեզք « այլ ինչ է բանս սիրելի՝ քան թէ գերիլ 'ի բանս գովեւատից, որ վասն « Աշոտոյ իշխանին իշխանաց են հետեւննէր : Վասն զի 'ի տիս հասեալ մի « ջակութեան, քաջահասակ էր նա և

« անձնեայ և թիկնաւէտ և զուարժեւ-  
« րես և մրայօն, նկարէն իմն և նիշ  
« յաչս ունելով, որպէս զյակինտ կար-  
« միր 'ի մ՛ջ մարդարտի ծագեալ, և  
« վայելչացեալ գեղեցկութեանն ալեօք.  
« մեծիմաստ և քաղցրաբան, և առ կե-  
« րակուրս խրախճանաց ոչ խնդացեալ  
« նորա ընդ լաւագոյնմն և ոչ արհամար-  
« հեալ զնուաստագոյնմն . այլ հասարա-  
« կաց 'ի վերայ տարածէր զզգեստ ինա-  
« մոց իւրոց, և լծակօք իմն կշռէր, նախ  
« զիւր և ապա զամենեցուն կենցաղս .  
« միանգամայն իսկ ասել, եթէ որ ինչ  
« մարդկութեանս էր պիտանի՝ ոչ ինչ  
« կասեցուցանէր » : Ուրիշ ժամանակա-  
կից պատմիչ մ'այլ, (թովմաս), որ այն-  
չափ Բազրատունեաց կողմնակից չէր,  
Արծրունեաց տունէն ըլլալով, և որուն  
զիւցաղն էր Գագիկ, չիկրնար չըսել Աշո-  
տոյ համար աւելի մեծաբանութեամբ,  
թէ « բարձրագոյնն և հանճարեղագոյնն  
« էր քան զբնաւ Հայաստանեայս, և  
« զընդհանուր կացեալսս 'ի ներքոյ երկ.  
« նից », որ է, ըստ մնաց հեղինակին,  
քան զամենայն Հայ և քան զամենայն  
մարդ (ժամանակակից) աւելի խելացի  
և մեծահարկի : Անուանին Փոտ պատ-  
րիարքն Յունաց կոչէր զԱշոտ՝ « Քաջա-  
յայտդ բարեպաշտութեամբ, հզօրա-  
գոյնդ ճոխութեամբ, բարձրագոյնդ 'ի  
Հոմասեռս » : Եիշեալ պատմիչներէն քիչ  
ետքն եկող խոհական պատմիչն Ասո-  
ղիկ՝ կ'ըսէ վասն Աշոտոյ, յետ յիշելոյ ըզ-  
յաղթութիւնս . « Էր այր քաղցը և հեզ,  
« և անարատ և անբամբաս կեանս կե-  
« ցեալ, և ոչ անօրինեալ արտաքոյ օ-  
« րինաց բնութեանն, և հաճոյ էր Աս-  
« տուծոյ յամենայն վարս անբիծս » :  
Թողունք յետազայ պատմչաց և ամե-  
նայն զինքը յիշողաց միաբան գովու-  
թիւնը և յարգութիւնն, որոց նման քի-  
շերուն տուած են իրմէ առաջ կամ ետե,  
կամ թէ և ոչ մէկուն . վասն զի դժար  
այլ է նմանը գտնել բոլոր բարեմաս-  
նութիւնքը մէկուել բերելով, վայելչու-  
թիւն, քաջութիւն, հանճար, կրօնա-  
սիրութիւն, աշխարհաշինութիւն, սիրտ  
շահել, աղջը պատուել և փառաւոր ը-

նել, հին քաղաքական կարգերը նորո-  
գել, եկեղեցեաց պայծառութեան և  
ուսման զարգացման օգնական ըլլալ,  
ցանկալի խաղաղութեամբ, զոր վայել-  
ցուց թէ ազգին և թէ սահմանակցացն,  
յետ այնքան դարերու անհանգստու-  
թեանց, խոռոշութեանց և կասկածա-  
նաց . և ազգային ինքնազմխութեան  
հետ՝ Հայոց մտաւոր, գրական և ա-  
րուեստական ողին այլ նորէն կանգնել.  
և ինչ որ ըստ այս մասանց՝ իրեք դա-  
րերու մէջ (ժ, ժԱ, ժԲ, ) շինութիւնք  
և բարգաւաճանք եղան, նախ Մեծ և  
ապա նաև Փոքր Հայոց մէջ, ամէնքն  
այլ պարտական են Աշոտոյ Ա, որ իրա-  
ւամբք Մեծ ըստեցաւ, և ոչ միայն թա-  
գաւորութեամբն այլ արդեամբք և ար-  
ժանեօք իր ամենայն անուանակցաց  
մէջ Առաջին : Վերոյիշեալ հեղինակաց  
վկայութիւնքն և պատմութեանց դէպքն  
( զոր յետոյ տեսնենք ), ամիրապետաց  
և կայսերաց պատուադրութիւնքն, սահ-  
մանակից ազգաց և պետութեանց պատ-  
կառանքն, ազգային նախարարաց և իշ-  
խանաց մեծարանք և հպատակութիւնն  
տարակոյս չեն թողուր որ ասկէ առ-  
ջի հազարամեան դարէդարձին՝ Հայա-  
ստանեայց մէջ նա էր ամենէն երևելի  
անձն, կամ բարձրագոյնն 'ի հումա-  
սեռս ըստ Փոտայ և թովմայի : Իսկ իմ  
այս բանս յիշելս և կրկնելս առ քեզ,  
Հայկակ, ոչ այնքան ժամանակին կարգն  
զայս բերելն է, որքան այսպիսի արժա-  
նաւոր անձի մը բաւականապէս ճան-  
չուած չըլլալն . Տիգրանք, Տրդաղք,  
Վահանք, Վարդանք՝ բոնած են մեր  
ազգասիրաց միտքը . արժանապէս քայց  
Աշոտոյ այլ տալու է իր տեղն, անոնց  
կարգին վրայ . ես հոն կը զնեմ. դու ե-  
թէ իրեն մեկենասը գտնես, զՇապուհ  
պատմիչ, կրնաս թերես նոր կարգի դա-  
սաւորութիւն ընել : Առ այժմ մնացեալ  
պատմչաց յիշատակներէն հաւաքեմ  
Աշոտոյ կեանքը . զոր լաւագոյն ևս ճանչ-  
նալու համար՝ պէտք է նախ ճանչնալ  
անոր ցեղը, զբազրատունիս, մանա-  
ւանդ Հայոց անիշխանութեան ատեն .  
մէկ մ'այլ պէտք է ճանչնալ այն ատե-

**Նի (Թ. դարու)** Հայաստանի և անոր մերձաւոր ազգաց քաղաքական վիճակը, և առաւել երկու աշխարհակալ իշխանութեանց, Յունաց և Արաբացւոց, որոց բաղդն կամ կամքն կու շարժէր զՀայս և բոլոր Ասիոյ արևմտեան մասը:

Բ. Բազրատունեաց ցեղին ծագման վրայ՝ երկու գրութիւն եղած է. մէկն բուն 'ի Հայկաց և յԱրմենակայ զաւակաց կու համարի զայն. բայց ըստ Խորենացւոյ՝ այս բանս ըստած է « անհաւաստի մարդոց, ոչ ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան ». մէկն այլ իր ըսածն, զոր վիրք և Յոյնք<sup>1</sup> հաստատեն. որ է 'ի Հրէից ծագումն, և ըստ Վրաց՝ բուն թագաւորական Յուղայի և Դաւթի ցեղէն. որոց նահապետն կամ նախահայրն 'ի Հայաստան եղաւ Շամշակամ Սափատիա անուամբ իշխանն, զոր Հրաշէ հայկակն թագաւորն մերնի զակակից Նաբուգոդոնոսորայ՝ 600 տարի Քրիստոսէ առաջ բերաւ յԵրուսաղեմէ իրեւ գերի. բայց ազատաբար և իշխանաբար բնակեցուց 'ի Հայաստան, արևմտեան հիւսիսային կողմերը. գրլիսաւոր տեղ տալով անոր Սպեր գաւառը. ուսկից ոմանք դէպ 'ի հիւսիս՝ Եգերաց և Վրաց կողմերը սփռեցան, ոմանք դէպ յարևմտոս և հարաւ, Փոքր, Բարձր ու Դ Հայոց կողմերը. թերևս ինչուան 'ի կապագաղովկիա, ուր Բագատեան<sup>2</sup> գաւառ յիշուի, վասն զի առաջ այս ցեղին սովորական եղած Բագրատ անունն այլ Բագաւիս էր. ինչպէս որ Սմբատն այլ Շամբատ կամ Սափատիա: Իսկ այս նոր անուններն առին երբ Քրիստոսի գալստենէն քիչ տարի առաջ բոնադատուեցան յԱրշամայ թագաւորէ Հայոց, և շատերն ուրացան հրէական կրօնքը. իսկ ոմանք հաւատարիմ մնացին, ինչպէս իրենց հայրերն այլ՝ բովանդակ Հայկազանց իշխանութեան տակ, որ աւելի ուղղահաւատ և ներողամիտ էին քան զԱրշակունիս:

1. Կոստանդին Պերփեռուժէն:

2. Խորենացին յաշխարհագորութեան Պահպէտնէ անուանէ, 'ի մասն Փոխւգիոյ:

Ասոնց թագաւորութեան սկիզբը՝ իրք 150 տարի նախ քան զԲրիստոսի թուականն, երբ Վաղարշակ մոտաւ թագաւորելու 'ի Հայս, հրէական տոհմին ազգապետն՝ Բագարատ, առաջին եղաւողուներու զնա թագաւոր, և շատ ընծաներէն զատ՝ իր մէկ ազնիւ աղջիկն այլ ընծայեց 'ի կնութիւն նորընտիր թագաւորին Հայոց. թագաւորն այլ անկէ վար չի մնալով զաները ընտրեց իրեն թագաղիր, և երկրորդ թագաւորութեան. միանգամայն և Ասպետ, այսինքն Հայոց ձիաւոր զօրաց զլուկս, որ ըսել է գրեթէ բոլոր բանակի սպարապետ, և առանձինն արևմտեան զօրագնդին (44 կամ 24,000 զօրաց) զլուկս՝ Այսպէս մէկ գործով, հրէական աչալիջութեամբ և շողզբորթութեամբ՝ Հայոց հին և նոր տոհմից մէջ առաջնութիւնը առաւ, ամենէն ազնիւ և մեծիշխան սեպուեցաւ. <sup>1</sup> այս պատիւ և իշխանութիւնս ժառանգական մնաց իր տոհմին մէջ ինչուան ետքը. թէ և քիչ մը ժամանակ՝ ոմանք յազգապետացն զրկուեցան, մեր թագաւորաց անհաւանութեամբն, կամ ստիպելովն կուռք պաշտել. բայց այն իրենց ազգային ճրկուն բարքն և յօժարամութիւնն 'ի ծառայել, միշտ իրենց տէրանց սիրտը կու շահէր. և կ'երսկի թէ Հայկազանց ժամանակ այլ մեծ պատիւ ունէին, և հաւանօրէն նոյնպէս արևմտից կողմնապետ էին: Մեծին Տրդատայ և իր թուանց գահակարգութեանց մէջ այլ յետ Հայկազանց և Պարթևաց թագաւորական տոհմից՝ առաջին գահն էր Բագրատունեաց կամ Ասպետաց. նոյնպէս գրուած էր Արշակունեաց թագաւորութենէն վերջն այլ Պարաից գահնամակին մէջ. միայն այս ատեն Սիւնին առաջին զրուեցաւ 'ի պատճառու մարզպանութեան Վասակայ: Արշակունեաց վերջին թագաւորաց հետ խնամութիւն այլ ընելով Բագրատունիք՝ այլ աւելի ազնիւ և նախապատիւ եղան: — Պատույն հետ Բագրատունեաց սահման-

1. Ստեփանոս Ուռպելեան. « Ընորհէ ևս ունել զնամինականն բարձ 'ի վերց քան զամենայն »:

Ներն այլ ընդարձակեցան . և այն հալածող Արշամայ ատեն իսկ բնակեցան ու մանք յԱյրարատ թագաւորական նահանգին մէջ . ուր և առաջին դարուն ետքերն Արտաշէս Ա. իր խնամակալ բազմարդիւն սպարապետին Այրաքաջ Արմբատայ՝ տուաւ կողովիտ դաւառը , Այրարատ լերանց ստորոտը , ուր չինեցնա զբագարան աւանն . յետոյ շինեցաւ Դարոյնիք բերդաւանն , և եղաւ իշխանանիստ և գերեզմանատուն բագրատունեաց , զոր իբրև տուն և քնարան նախնեաց՝ պատուէին ազգապետքն ինչուան ՚ի ժար Քրիստոսի , և գեռ ու մանք հոն թաղուէին : — Ը դարուն վերջերը՝ մեր մեծ Աշոտոյ պապն՝ Արշարունեաց երկիրը՝ կամ Երասխաձորը՝ գնեց ՚ի կամսարականաց , հետ Շիրակայ , որ քիչ ատենէն իրենց ցեղին թագաւորաբնակ տեղն եղաւ : Տարօնոյ երկիրին այլ կ'իշխէին Բագրատունիք նոյն ատեն , բայց ինչ կերպով զանիկայ ՚ի Մամիկոնէից աւնուզն՝ մեզի յայտնի չէ : Անկէ այլ հեռու , Մոկաց երկիրին իշխանն այլ Բագրատունի էր այս Ժամանակներս ( թ դարու մէջ ) . ըսել է որ Հայաստանի միջին աղնուագոյն այրարատեան թագաւորական երկիրները՝ քիչ քիչ Բագրատունեաց ձեռքն անցան , մասսամբ հարաւային Հայոց այլ : Բայց այսչափ միայն չէ . հապա մնացեալ արևելեան երկու մեծ աշխարհաց կամ ցեղից , այսինքն Արծրունեաց և Սիւնեաց հետ այլ խնամենարով՝ կերպով մը անոնց վրայ այլ նախերիցութիւն ունէին Բագրատունիք , գոնէ մեր Աշոտն , որ այն երկու մեծապատիւ ցեղից ազգապետաց աներ և հայրագիր էր : իսկ հիւսիսային Հայոց և սահմանակցաց , գրեթէ ծայրէ ծայր Սև ծովուն եղերքէն ինչուան կազրից ծովուն եղերքը՝ հայ ու վրալեզու մեծ իշխանք և թագաւորք՝ ՚ի Բագրատունեաց էին թ-ժբ դարուց մէջ . սկսեալ ՚ի Համչէնու ու Ապերու երկրէն , որ Բագրատունեաց ընագաւառն էր ՚ի Հայս , Հայոց տէրն՝ որ կիւրապաղատ կ'ըսուէր յունական պատուվ , կղարջաց և Գուգարաց տեալքն ,

Ափխաղաց կամ Եղերաց թագաւորն , վրաց թագաւորն , կախեթոյ թագաւորն , Զորոյ գետոյ և Աղուանից ըսուած թագաւորք : Վրալեզու Բագրատունի իշխանաց սկիզբն եղաւ յ'լ դարու , ՚ի Հայոց հոն անցնելով ոմանց , թէ և Վիրք չեն ուզեր ընդունիլ զայս , և աւանդեն թէ երուսաղէմէն եկած է իրենց ցեղապետն Զ դարուն վերջերը : Իսկ արևմտեան կողմերը՝ Ապերէն անգին Փոքր Հայոց մէջ այլ Աշխարհաբերդու ( Ագչէհրօվա ) սահմաններուն՝ այս ատեններս կը տիրէր Բագրատունի մը , Գրիգոր Իշխանիկ անուն , որ Յունաց ձեռքէն ուրիշ տեղեր այլ առաւ : Այս դարերուս և կողմերուս պատմութիւնը քննողին՝ յիրաւի մեծ զարմանք պիտի բերեն այսպիսի դէպք . և զրեթէ ուրիշ տեղ մ'այլ տեսնուած չէ մէկ իշխանական տոհմի մը՝ այսպէս լըուիկ մեղմիկ այգան ընդարձակ և զանազան աշխարհաց իշխանութիւններ ձեռք բերելն՝ առանց բոնակալութեան . և կու ստիպուի հաւատալ մարգարէութեան Խորենացւոյ , ինչպէս ինքն այլ կու հաւատը Աստուծոյ առ Արքահամը ըսածին , և Եւ Բագրատունւոյդ ասեմ , յիշելով զբան իւր ( Աստուծոյ ) , եթէ թագաւորք ազգաց ՚ի քէն ելցեն , և թագաւորէք ՚ի Դուին » : <sup>1</sup>

Դառնալով նորէն իրենց իշխանական պայշաղատութեան , Արշակունեաց տէրութեան վերջերը՝ ըստ սովորութեան՝ իրենցմէ էր սպարապետն Հայոց . որ երբ մեռաւ , Ս. Մահակ հայրապետն՝ իր դատեր խնդրանզը՝ անոր որդին իր թոռը Մամիկոնեան իշխանը ( զՄեծն Վարդան ) դրաւ . բայց յետնահատակութեան նորա՝ իր յաջորդն Վահան և ուխտապահ նախարարը՝ Բագրատունեաց զիսաւորին՝ Սահակայ ասպետի՝ տուփն Հայոց ազգապետու-

1. Թէ և զԴուին այլ երբեմն առին Բագրատունիք . բայց իրենց թագաւորական աթոռն չեղաւ հոն , այլ ոչ այլ շատ հեռու այն կողմէն : Աշոտոյ որդին Սմբատ թագաւորն հոն նահատակուեցաւ . և այնով կ'ըսէ պատմի մը , Խորենացւոյն գուշակութիւնն կատարեցաւ :

թիւնը, որ այն ատեն կ'ըսուէր Մարզպան։ Անկէ ետև դար մը ( Զ դար ), դար Պարսից և Յունաց հակառակութեան, Բագրատունիք գրեթէ չեն յիշուիր պատմութեան մէջ, այլ աւելի Մամիկոնեանք և ուրիշ ցեղերէ նախիշխանք. բայց նոյն դարուն վերջը Սրբաւտ բազմայիշ նորէն կու կանգնէ ցեղին անունը և փառքը, գրեթէ թագաւորական պատիւ գտնելով Պարսից արքային չնորհքով, վասն քաջութեանց իւրոց, և Վրկանայ մարզպան կ'ըլլայ, Հայոց մէջ այլ իրքն նախիշխան. որուն նոյն պատուով յաջորդեցին՝ որդին վարազտիրոց, և թոռն Սմբատ, մինչե՛ի կէս է դարու. յորում Արաբացիք վերուցին Պարսից Սասանեանց թագաւորութիւնը, և մոտան 'ի Հայաստան։ Հոս այլ Բագրատունեաց ազգապետն և Հայոց նախիշխանն Սմբատ՝ իր նախնեաց քաղաքագիտութիւնը բանեցնելով կամովի հնագանդեցաւ Արաբաց անդիմակաց իշխանութեան, և մնաց իր պատուին մէջ. այս քաղաքագիտութիւնս բանեցուցին իր յաջորդքն այլ, մեծաւ մասամբ, ինչուան մեր Աշոտն այլ, և այնպէս յաջողեցան զՀայաստան 'ի խաղաղութեան պահել և զիրենք յիշխանութեան, հաճութեամբ թէ ազգին և թէ ամիրապետաց. իսկ երբ մէկ կամ մէկայլ կողմէն տհաճութիւն եղաւ. Հայաստան գրեթէ միշտ վսասուեցաւ. Մէկ խօսքով և տեսութեամբ, յետ վերցուելու Հայոց ինքնազլիսութեան՝ Արշակունեաց թագովը, ազգային բաղդն կամ վարչութիւնն սահմանուած կ'երեւեի 'ի ձեռս Բագրատունեաց մինչեւ յ' ԺԲ դար, կամ 800 տարուան միջոց, յորում իրքն դար մի միայն Մամիկոնեանք փայլեցան։ Վերոյիշեալ բազմայդ Սմբատէն սկսեալ ( Զ դարուն վերջէն ) ինչուան 'ի Մեծն մեր Աշոտ 'ի կէս թ դարու, 260 տարի, գրեթէ անընդհատ կը յիշուին Բագրատունեաց գլխաւորքն իրքն տասն ազգ, Հայոց իշխանապետի և սպարապետի պատուով. յԱշոտոյ Մեծէն այլ սկսեալ 200 տարի՝ այլ աւելի պատուով, իրքն նախիշ-

խան թագաւոր Հայոց կը տեսէ պայազատութիւնն. անկէ այլ ետև դարձեալ 200 տարույ չափ՝ ցեղին պայազատութիւնն կու մայ փոքր թագաւորութեանց մէջ ( յ' կէս ԺԳ դարու )։ Իսկ Վրաց և իմէրէթի մէջ ինչուան այս դարուս սկիզբն կար Բագրատունի թագաւորութիւնն, և ինչուան այս օրս թագաւորական սերունդը և իշխանազունք Բագրատունիք, որ Որուսաց կայսրութեան մէջ արքայազանց և զօրապետաց պատիւ և իշխանութիւնն ունին հիմա այլ. և Եւրոպայի, գույցէ բոլոր աշխարհիս ազնուական տոհմից մէջ ամենէն հնագոյնն և ազնուագոյնն է Բագրատունեաց ցեղն՝ 2,500 տարուան հնութեամբ ( կամ 3,000 րատ Վրաց, հանելով 'ի Դաւիթ մարզարէ )։

Գ. Հայոց աշխարհին և աղջին ճակատագիր մը եղած է իր մէջ բաժանեալ ըլլայն քաղաքական վարչութեամբ, յետ վերցուելու ինքնազլիսութեանն ( Արշակունեաց ), կէսն Յունաց և կէսն Պարսից ձեռք ընկնալով. որոց յաջորդկամ ժառանգ եղան ինչուան անցեալ դարուն վերջն՝ Օսմանեանք և նոր Պարաք՝ յետ Արաբացոց. իսկ այս դարուս՝ հիւսիսային հզօր ազգ մ' այլ ( Որու ) այն երկուքին բաժնէն մեծ մեծ մասեր առնըլով երրորդապետ եղաւ Հայոց, հանդերձ Վրաց աշխարհին տիրանալովս, որուն միացած էր մեր աշխարհին մէկ մասն այլ։ Յունաց բաժինն՝ նախ արևմտեան Հայք, քիչ մ' այլ հիւսիսային և հարաւային գաւառներն էին, կարնոյ, Բասենու, Երզնկայի, Զմէկածագու, Խարբերդի, Արզնի, Նիրկերտի, Ամրայ կողմերն, և բոլոր Փոքր Հայք, Եփրատայ աջ կամ արևմտեան կողմն եղած աշխարհները. որք ատեն ատեն կերպ կերպ բաժնուեցան քաղաքական կամ աշխարհագրական օրինօք, և Յոյն կամ Հայ իշխանաց յանձնուեցան. իսկ Մեծ Հայոց մասին վրայ սովորաբար տեղացի իշխաններ կու գրուէին, մէկ գրլխաւորի մը երաշխաւորութեան տակ, որ զանազան պատուոյ անուն և աստիճան կ'ունենար, ինչպէս՝ կումս, ստրա-

տեղատ, պատրիկ, կիւրապաղատ, բրոդոսքար, նոպիլիսիմուս, ապիհիշպատ, և այլն. զօրաւոր կայսերաց ժամանակ, ինչպէս էին Յուստինիանոս, Մորիկ, Հերակլ, և այլն, բաւական հանգիստ և հնազանդ էին արևմտեայ Հայք, և կայսերութեան մեծամեծ պաշտամանց և արքունեաց մէջ յառաջադէմ. իսկ տկար և մոլի կայսերաց ատեն՝ շատ հեղ տժգոհ և ապստամբ. և երբ Արարացիք տիրեցին արևելեայց, երբեմն ուղեցին ասոնց՝ քան Յունաց ներքեանալ, թերևս ազգին միութեանն այլ փափագելով, յորում ըստ կրօնից այլ զանազանութիւն մտեր էր. յունակողմանք կաթողիկոսին իշխանութենէն ելնելով, քիչ անգամ նաև առանձին կաթողիկոս այլ ունենալով, բայց աւելի՝ առանձին եպիսկոպոսներ իրեւ ՚ի թեմի Յունաց պատրիարքաց. քիչ մը մերայոց կամքն, քիչ մը Յունաց բոնութիւնն՝ ի և լ դարուց մէջ գրեթէ բոլոր Մեծ Հայոց տիրեց, և ոչ միայն Դոյնայ մէջ նստաւ ոստիկան, իբրև վերակացու և հարկահան Հայոց, այլ և իրդիումի, կամախի, Խարբերդու, և հարաւային Հայոց կողմերը զանազան ամիրաներ և հարկահաններ դրուեցան. ինչպէս յԱրքն, Նիրկերտ, Մանազկերտ, Խաթ, Նախիջևան, Պարտաւ, և այլն. որոնց հետ երբեմն Յոյնք կու պատերազմէին, քիչ հեղ յաղթէին: իսկ այս ժամանակիս, Աշոտոյ երիտասարդութեան ատեն՝ Թէոփիլոս կայսրն բաւական զօրացաւ և շատ տեղ առաւ Արաբացւոց ձեռքէն. բայց վերջապէս հաշտութիւն ընելով յետ քաշուեցաւ. իր յաջորդ Միքելին ատեն (842–867) Մեծ Հայք գրեթէ բոլոր Յունաց ձեռքէն ենելով կամ Արաբացի ամիրայից կամ բնիկ իշխանաց ձեռք մնացին. ինչուան որ վասիլ Մակեդոնացի կամ Արշակունի թագաւորեց 20 տարի (867–886) և բաւական զօրութեամբ և փառքով կայսերութիւնը կանգնեց: Այս անձը հարկաւոր է քիչ մ' աւելի ճանշնալ թէ Աշոտոյ ժամանակակից ըլլալուն, թէ հայ-

ազգի ըլլալուն և թէ գործոցն համար: Այս ատեն Յունաց և Հայոց մէջ քանի մը տեսութեամբք իրարու նման երկու իշխանապետ և երկու հայրապետ եղան, և իրարու հետ գործակցութիւն այլ ունեցան. Վասիլ և Աշոտ, (857–886) Փոտ և Զաքարիա (854–875): Վասիլը ըստ ոմանց մեր պատմչաց՝ Տարօնոյ կողմերէն էր, բայց հաւանօրէն էր ՚ի Մակեդոնիոյ, և ՚ի հօրէ կամ ՚ի մօրէ Արշակունի Հայերէն, զոր կայսերքն Յունաց այն կողմերը բնակեցուցեր էին. Յոյնք շատ զարմանալի բաներ կու պատմեն ասոր ծննդեան, տղայութեան, ուժին և քաջութեանց վրայ, և կայսր ըլլալու գուշակութեանց. սաոյզն այս է որ աղէկ կրթուած, կտրիճ, զգօն և բարեպաշտ մարդ էր. և խելքով ու քաջութեամբ յառաջացաւ, ինչուան յարգունիս, բայց անզգամ և մոլի կայսեր մը պաշտօնեայ ըլլալով՝ ստիպուեցաւ երբեմն անոր կամաց և գործոցն այլ հետեւիլ, որ իր համբաւոյն մեծ աղտ է, զոր և աւելցուց զկայսրը սպաննելով և քանի մը ուրիշ սպանութեամբք այլ: Բայց արդարասէր կառավարութեամբ, յաղթութեամբք, շինութեամբք, գեղեցիկ օրինք և գրաւոր խրատուք այլ նշանաւոր կայսերաց մէկն եղաւ: Գըլխաւոր գործոց մէկն այլ է՝ Փոքր Հայոց մէջ բոնացած Պօլիկեան կամ Մանիքեցի աղանդաւորները յնջելն, հետեւնին անձամբ պատերազմելով և ուրիշ զօրավարգք, որովհետև թշնամիք այլ գէնք գործածէին: Մէկ նշանաւոր գէպքն այլ եղաւ Փոտայ հետ յարաբերութիւնն: Այս անձին ծանօթութիւնն այլ հարկաւոր է մեզի. Վասիլ նախորդ Գինով Միքայէլին ատեն, իր քեռին վարդ՝ ուզածին պէս կառավարէր զնա և տէրութիւնը, հանդերձ անկարգութեամբք և զեղիսութեամբ. որոյ համար յանդիմանուելով ՚ի Ս. Իզնատիոս Հայրապետէ կ. Պօլսոյ՝ ոխացաւ, և աթոռէն ձգելով պքսորել տուաւ, անկէ աւելի անակնկալ կերպով տեղը դրաւ իր խնամիներէն մէկն, որ տէրութեան դիւանապետն էր, և ժամանակին ամե-

նահմուտ անձն և ճարտար դրիչն սեպուէր. զոր և աշխարհական վիճակէն չորս օրուան մէջ բարձրացուց ՚ի գահ պատրիարքութեան կ. Պօլսոյ, յամին 857. այս էր Փոտ : Ասոր նման և ասկէ շուտ՝ երկու տարի առաջ այլ ՚ի Հայս, Զաքարիա՝ իր արժանեաց և գիտութեան համար՝ մի և նոյն օրուան մէջ յաշխարհական վիճակէն բարձրացաւ ինչուան ՚ի ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց. որ և Յովհաննէս իմաստափրէն ետև († 728) առաջին մատենագիր և ժողովարար Հայրապետ է : Այս երկու զուգակցաց մէջ որչափ որ Աշտվեհագոյն կ'երևի քան զվասիլ անարատ քաղաքավարութեամբ, այնպէս Զաքարիա քան զՓոտ. ետքինս գիտութեամբն անհամեմատ վերագոյն էր քան զմեր հայրապետն, իսկ խորամանկութեան գործովքն անհամեմատ վար քան զաթոռն՝ յոր նստաւ բռնութեամբ. աւելի զարմանալին է՝ որ Փոտ ջանաց Հայոց և Յունաց եկեղեցւոյն միութիւնը հաստատել ուղղափառապէս, յետոյ իր եկեղեցին զատեց ընդհանրական եկեղեցւոյ միութենէն : Յայտնի են բազմաց իր գործքերն, զոր չի կրցաւ առաջ տանիլ վասիլ ատեն, որ ՚ի թագաւորելն՝ վոնտեց զնա յաթոռոյ և դարձուց զԱ. Իգնատիոս. բայց երբ սա վախճանեցաւ (878), Փոտ խորամանկութեամբ շահեցաւ զսիրտ վասիլ . որ թերեւս իր ըսպանութեամբ ՚ի կայսրութիւն ենելուն վրայ միշտ վախճալով, կ'ուզէր եւել քան զեւել համոզել ժողովուրդը իր օրինաւոր ըլլալուն, մանաւանդ իրեւ Արշակունի ցեղին սերունդ : Այս տկար կողմը գիտնալով Փոտ՝ հին յունարէն ձեռագրի մը մէջ քովիէն պատմութիւն մը հնարեց և գրեց հին ձևով հին մագաղաթի վրայ, գուշակելով ՚ի նմա թէ Արշակունեաց ցեղէն թագաւոր մը պիտի գայ այս ատեն, այս անուն, և այս բաներս պիտի ընէ, զոր արդէն ըրած էր վասիլ. գիրքն այլ անոր գրատան մէջ մտուց՝ իր մէկ համախոհին ձեռքով, որ և զայն կարդալու և մեկնելու համար՝ Փոտէն յարմար մարդ չի գըտ-

նուիլն հաւատացուց : Դարձաւ Փոտ յաքսորանքէն, կարդաց իր մարդարէութիւնը, ինքն իրեն մեկնիչ ըլլալով, իմացուց որ այն գրուածը բոլորովին յարմար էր վասիլ, ինքն էր գուշակեալ Արշակունին՝ Հայոց թագաւորաց ցեղէն, որք պայազատելու ատեն՝ թագը կ'առնուեին բագրատունեաց նահապետէն . վասիլ այլ գոհութեամբ կատարեց այս բանս, ինչպէս յետոյ տեսնենք . և Փոտ նորէն նստաւ յաթոռ հայրապետութեան ետև († 728) առաջին մատենագիր և ժողովարար Հայրապետ է : Այս երկու զուգակցաց մէջ որչափ որ Աշտվեհագոյն կ'երևի քան զվասիլ անարատ քաղաքավարութեամբ, այնպէս Զաքարիա քան զՓոտ. ետքինս գիտութեամբն անհամեմատ վերագոյն էր քան զմեր հայրապետն, իսկ խորամանկութեան գործովքն անհամեմատ վար քան զաթոռն՝ յոր նստաւ բռնութեամբ. աւելի զարմանալին է՝ որ Փոտ ջանաց Հայոց և Յունաց եկեղեցւոյն միութիւնը հաստատել ուղղափառապէս, յետոյ իր եկեղեցին զատեց ընդհանրական եկեղեցւոյ միութենէն : Յայտնի են բազմաց իր գործքերն, որ կարծութիւնն հոգալու անկարտղ, բաւական ժամանակ անզօր է ինքովինքը պաշտպանելու և խնամելու, և բովանդակ իր ապագայն ծնողացը սիրավիր խնամոցը վրայ հաստատած է . որով ընտանեկան զգացմունքը յարբունս հասեալ մարդուն վրայ՝ բնական դուռն է քաղաքական ընկերութեանց :

Իսկ որովհետև անկարելի է մարդկային ընկերութիւն մը ենթադրել առանց ենթադրելու անոր առանձինն անզամոց յարաբերութիւնն իրարուհետ և բովանդակ ընկերութեան մար-

### Շարունակի

Հ. Դ. Վ. Ա.

---

Քաղաքական միարանուրիւնք :

Մարդուս բնական վիճակն է ընկերութիւն, և ոչ թէ առանձնութիւն բատկարծեաց ոմանց . վասն զի մարդս ընկերութեան մէջ կը ծնանի ու կ'ապրի, և իր բովանդակ էութիւնը՝ ինչպէս նաև մտաւորական կեանքը՝ ենթակայ է ՚ի բնէ ընկերական հանդամանաց ազդեցութեան :

Ծնչաւոր արարածոց մէջ մարդս ՚ի ծննդեան ամենէն ակապն է և իր կարօտութիւնն հոգալու անկարտղ, բաւական ժամանակ անզօր է ինքովինքը պաշտպանելու և խնամելու, և բովանդակ իր ապագայն ծնողացը սիրավիր խնամոցը վրայ հաստատած է . որով ընտանեկան զգացմունքը յարբունս հասեալ մարդուն վրայ՝ բնական դուռն է քաղաքական ընկերութեանց :

Իսկ որովհետև անկարելի է մարդկային ընկերութիւն մը ենթադրել առանց ենթադրելու անոր առանձինն անզամոց յարաբերութիւնն իրարուհետ և բովանդակ ընկերութեան մար-